Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Աստծո հունձքը

Քրիստա անունով մի կին աշխատում էր սերմերի խանութում: Նրան դուր էր գալիս իր աշխատանքը: Դա մի մեծ հրաշք էր, երբ իր վաճառած յուրաքանչյուր փոքրիկ սերմ կարող էր վերածվել զարմանահրաշ մի բանի՝ գազարի, կաղամբի կամ նույնիսկ մի հզոր կաղնու ծառի:

Քրիստային դուր էր գալիս նստել իր համակարգչի դիմաց՝ պատվերներ ընդունելով և հարցերին պատասխանելով: Բայց մի օր նա բողոք ստացավ, որը շփոթեցրեց նրան:

«Սերմերը չեն ծլում»,- ասաց հաճախորդը: «Ես գնել եմ դրանք երկու ամիս առաջ և մինչև հիմա փոփոխություն չկա»:

«Դուք ցանե՞լ եք դրանք բերրի հողում ու տվե՞լ եք բավականաչափ ջուր և արևի լույս»,- հարցրեց Քրիստան:

«Ոչ, բայց ես արել եմ իմ մասը»,- պատասխանեց հաճախորդը: «Ես գնել եմ սերմերը: Վերջիվերջո, դրանք *երաշխավորված* են աճելու»:

«Բայց չե՞ք ցանել դրանք»:

«Ոչ: Այդ դեպքում ես կկեղտոտեի իմ ձեռքերը»:

Քրիստան մտածեց այս մասին ու որոշեց, որ անհրաժեշտ է պատրաստել սերմերը ցանելու ուղեցույց: Նա որոշեց, թե որն է լինելու առաջին ուղենիշը. «Դուք պետք է հետևեք սերմերը ցանելու ցուցումներին, որպեսզի դրանք աճեն: Դուք չէք կարող դրանք պահարանում դնել և սպասել, թե երբ կաճեն»:

Շատ չէր անցել, երբ մեկուրիշ բողոք ապշեցրեց նրան:

«Սերմերը չեն ծլում»,- ասաց հաճախորդը:

«Դուք դրանք ցանե՞լ եք բերրի հողում,- ասաց Քրիստան: -Դրանց համապատասխան չափով ջուր ու արևի լույս տվե՞լ եք»:

«Օ, իհարկե»,- պնդեց հաճախորդը: «Ես արել եմ այդ ամենը – հենց այնպես, ինչպես գրված է տուփի վրա: Բայց դրանք չեն ծլում»:

«Ամենևին ոչինչ չեղա՞վ: Ծիլեր չարձակեցի՞ն»:

«Ոչ մի բան չեղավ»,- ասաց հաճախորդը: «Ես ցանեցի դրանք հենց այնպես, ինչպես որ ասված էր: Հույս ունեի, որ ճաշին լոլիկ կունենայի: Հիմա շատ հուսահատված եմ»:

«Մեկ րոպե»,- ասաց Քրիստան: «Դուք ասում եք, որ սերմերն այսո՞ր եք ցանել»:

«Մի՛ եղեք ծիծաղելի»,- ասաց հաճախորդը: «Ես դրանք մի շաբաթ առաջ եմ ցանել: Ես չէի ակնկալում լոլիկներ տեսնել հենց առաջին օրը. ես համբերատար եմ: Թույլ տվեք ասեմ, որ այդ ժամանակից մինչև հիմա շատ անգամ ջրել ու սպասել եմ»:

Քրիստան հասկացավ, որ պետք է ավելացներ ևս մեկ ուղենիշ. «Այս սերմերը ենթարկվում են կենսաբանական օրենքներին: Եթե դուք ցանում եք սերմերն առավոտյան ու այդ շաբաթվա ընթացքում ակնկալում եք լոլիկ ճաշակել, դուք կհուսահատվեք: Դուք պետք է համբերատար լինեք և սպասեք, մինչև որ բնությունն

իր գործը կատարի ձեզ համար»:

Ամեն ինչ լավ էր ընթանում, մինչև որ Քրիստան ևս մեկ բողոք ստացավ:

«Ես շատ հուսախաբված եմ ձեր սերմերից»,- սկսեց հաճախորդը: «Ես դրանք ցանել եմ հենց այնպես, ինչպես խորհուրդ է տրված տուփի վրա: Ես ջրել եմ դրանք, հավաստիացել եմ, որ ստանում են արևի լույս, և սպասել եմ մինչև որ վերջապես տվել են իրենց բերքը»:

«Կարծես, դուք ամեն ինչ ճիշտ եք արել»,- ասաց Քրիստան:

«Այդ ամենը շատ հրաշալի է»,- ասաց հաճախորդը: «Սակայն իմ ստացածը ցուկկինի էր»:

«Իմ գրառումները ցույց են տալիս, որ հենց դրանք են եղել ձեր պատվիրած սերմերը»,- պատասխանեց Քրիստան:

«Բայց ես ցուկկինի չեմ ուզում. ես դդում եմ ուզում»:

«Չեմ հասկանում»:

«Ես սերմերն իմ դդմիկների հողակտորում ցանեցի՝ նույն հողում, որն անցած տարի դդմիկներ էր տալիս: Ես ամեն օր գովաբանում էի սածիլներին՝ ասելով նրանց, թե ինչպիսի գեղեցիկ դդմիկներ են նրանք դառնալու: Բայց մեծ, կլոր, նարնջագույն դդմիկների փոխարեն ես ստացա երկար, կանաչ ցուկկինի: Տոննաներով»:

Այդ ժամանակ Քրիստան հասկացավ, որ ուղեցույցը կարող էր բավական չլինել և որ անհրաժեշտ էր մի սկզբունք գրել. «Բերքը կախված է ձեր ցանած սերմից ու ժամանակից»:

Հունձքի օրենքը

Պողոս Առաքյալն ուսուցանել է Աստծո հունձքի վերաբերյալ.

«Մի խաբուիք. Աստուած չի ծաղրուիլ: Որովհետև ինչ որ մարդ սերմէ, այն էլ կինձէ.

Իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կինձէ. և Հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կինձէ:

Եւ չձանձրանանք բարին գործելուցը, որովհետև իր ժամանակին կինձենք՝ եթէ չթուլանանք» (Գաղատացիս 6.7–9):

Վերջին ժամանակներում Տերն այս անփոփոխ օրենքի վերաբերյալ մեզ տվել է լրացուցիչ իմաստություն ու պատկերացում.

«Կա օրենք, երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները,–

Եվ եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն» (ՎևՈւ 130.20–21):

Ինչ ցանենք, այն էլ կինձենք:

Տիրոջ հունձքն աներևակայելիորեն փառահեղ է: Նրանց, ովքեր հարգում են Նրան, Իր լիառատ օրհնությունները գալիս են «լավ չափով՝ թափ տրուած շարժուած լիփ լիքը. . . . որովհետև այն չափովը որ չափէք, նորանով կչափուիձեզ» (Ղուկաս 6.38):

Ինչպես երկրային սերմերը, այդպես էլ երկնքի շատ օրհնություններ պահանջում են համբերություն: Մենք չենք կարող մեր կրոնը դնել պահարանում և ակնկալել, որ հնձելու ենք հոգևոր օրհնություններ: Բայց եթե մենք սերմանենք ու սնուցենք ավետարանի չափանիշները մեր ամենօրյա ընտանեկան կյանքում, կա մեծ հավանականություն, որ մեր երեխաները կմեծանան՝ տալով մեծ արժեք ունեցող հոգևոր պտուղ իրենց և իրենց սերունդների համար:

Աստծո պատասխանները մեր աղոթքներին միշտ չէ, որ անմիջապես են գալիս. երբեմն թվում է դրանք ամենևին էլ չեն գալիս, բայց Աստված գիտի ինչն է լավ Իր զավակների համար: Անշուշտ, մի օր մենք ավելի պարզ կտեսնենք, և այդ օրը մենք կճանաչենք երկնքի բարությունն ու առատաձեռնությունը:

Միևնույն ժամանակ, մեր նպատակն ու մեծ ուրախությունն է քայլել մեր Ուսուցչի ու Փրկչի հետքերով և ապրել լավ ու մաքուր կյանքով, որպեսզի Աստծո անգին օրհնությունների խոստացված ու թանկագին հունձքը կարողանա լինել մերը:

Ինչ ցանենք, այն էլ կինձենք:

Սա է երկնքի օրենքը:

Սա է Աստծո հունձքի օրենքը:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նրանց հետ, ում այցելում եք, քննարկեք, թե ինչպես է Աստծո հունձքի օրենքն առնչվում հարաբերություններին, դարձի գալուն ու վկայության կամ կարիերայի ու կրթական նպատակներին: Դուք կարող եք կարդալ և քննարկել այս օրենքին վերաբերող սուրբ գրության հատվածներ, ինչպիսիք են՝

Առակաց 11.18; Բ Կորնթացիս 9.6; և Ալմա 32: Խրախուսեք նրանց վերանայել նախորդ նպատակներն ու սահմանել նոր նպատակներ՝ արդար արդյունքների հասնելու համար: Օգնեք նրանց մշակել մի ծրագիր և հետևողականորեն գործել ըստ դրա՝ իրենց երկարաժամկետ նպատակին հասնելու համար:

ԵՐԵԽԱՆԵՐ

Պլանավորեք ձեր հունձքը

Հունձքի վերաբերյալ Աստծո օրենքն այն է, որ եթե մենք ինչ-որ բան ենք ուզում ունենալ հետագայում, ապա դրա համար հիմա պետք է աշխատենք: Եթե ուզում ենք այգի աճեցնել, պետք է ցանենք սերմերը, ջրենք դրանք ու պաշտպանենք որոմներից: Եթե դա չանենք, ապա հետագայում բերք չենք ունենա:

Ներքևում մի քանի լավ «պտուղների» ցանկ է բերված, որ դուք կարող եք ունենալ ձեր կյանքում: Գրի առեք մի քանի բան, որ կարող եք անել այս ամսվա ընթացքում, որոնք ձեզ կօգնեն ստանալ այդ օրհնությունները:

- Երջանիկ տուն
- Կրթություն
- Լավ ընկերներ
- Մկրտություն և հաստատում
- Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, August 2014.* Armenian.-ի թարգմանությունը 10868 201

Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Մեսիա

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով կիսվել: Ինչպես կարող է Փրկչի կյանքը և դերը հասկանալը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ ու օգնել նրանց, ում մասին դուք հոգ եք տանում այցելությամբ ուսուցման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար այցելեքreliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք կարող ենք բնակվել Աստծո ներկայության մեջ «Սուրբ Մեսիայի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով» (2 Նեփի 2.8): *Մեսիա* բառը «արամեական և եբրայերեն բառաձև է, որը նշանակում է «օծյալ»: . . . Նոր Կտակարանում Հիսուսին անվանում էին Քրիստոս, որը *Մեսիա* բառի հունարեն համարժեքն է: Այն նշանակում է օծյալ Մարգարե, Քահանա, Թագավոր և Ազատիչ»:[1]

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը վկայել է. «Ես գիտեմ, որ [Հիսուս Քրիստոսն] Իսրայելի Սուրբն է, Մեսիան, ով մի օր կրկին կգա վերջնական փառքով՝ թագավորելու երկրի վրա՝ որպես տերերի Տեր և արքաների Արքա: Ես գիտեմ, որ չկա ոչ մի ուրիշ անուն տրված երկնքի տակ, որով մարդ [կամ կին] կարողանա փրկվել»:[2]

«Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն ու Քավիչն է»,- ասել է Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը: «Նա խոստացված Մեսիան է: Նա ապրեց կատարյալ կյանքով և քավեց մեր մեղքերը: Նա միշտ կլինի մեր կողքին: Նա կկռվի մեր կռիվներում: Նա մեր հույսն է, Նա մեր փրկությունն է, Նա մեր ճանապարհն է»:[3]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Հովհաննեսի 1.38–41; 4.25–26, 40–42; 2 Նեփի 6.13; 25.16–17

Սուրբ գրություններից

Քրիստոսի կին հետևորդներն ականատես են եղել որպես Մեսիա Իր դերին: Մարիամ Մագդաղենացին Հիսուս Քրիստոսի հետևորդն էր: Նա առաջինն էր, ով Քրիստոսի Հարության առավոտ տեսավ «քարը գերեզմանից վեր առած»: Նա «գերեզմանի մոտ կանգնած էր դուրսը և լաց էր լինում», երբ պարզվեց, որ Նրա մարմինն այլևս գերեզմանում չէր:

Այնուհետև «դարձաւ իր յետին կողմը, և Յիսուսին տեսաւ՝ կանգնած. և չգիտէր թէ Յիսուսն է:

Յիսուսը նորան ասեց. Կին, ինչո՞ւ ես լաց լինում,ո՞ւմ ես որոնում.Նա էլ կարծելով թէ պարտիզպանն է, ասեց նորան. Տէր, եթե դու վեր առար նորան, ասիր ինձ՝ ուր ես դրել նորան, որ ես վեր առնեմ նորան:

Յիսուսը նորան ասեց. Մարիամ. և նա դարձաւ և ասեց նորան. Ռաբբունի, որ կթարգմանուի Վարդապետ»: Մարիամը հասկացավ, որ Նա պարտիզպանը չէ, այլ Հիսուս Քրիստոսն է, Մեսիան: (Տես Յովհաննես 20.1–17:)

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սուրբ գրությունների ուղեցույց, “Մեսիա,”; scriptures.lds.org:
2. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Միակ ճշմարիտ Աստված և Հիսուս Քրիստոս, որին Նա ուղարկեց», *Լիահոնա,* Նոյ. 2007, 40:
3. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Աշակերտի ուղին», *Լիահոնա,* մայիս 2009, 78:

Խորհեք այս մասին

Ինչո՞ւ է կարևոր հասկանալ որպես Մեսիա Փրկչի դերը:

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *Visiting Teaching Message, August 2014.* Armenian.-ի թարգմանությունը 10868 201